


ԲՄԿ ՊՈՒՀ ՌՌԻՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան



Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի ամբիոն

Հեղինակ՝ Ի.Գ.Թ., դոցենտ Դալլաքյան Լ.Գ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Ռուսաստանի պետության և իրավունքի պատմություն

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

(հեռակա)

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

1. Դասընթացի ներածություն

«Ռուսաստանի պետության և իրավունքի պատմություն» դասընթացը վերաբերվում է ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբովանդակությանը:

«Ռուսաստանի պետության և իրավունքի պատմությունը» որպես ուսումնական առարկա ժամանակագրական կարգով դիտարկում է Ռուսաստանի պետական-իրավական համակարգի ձևավորումն ու զարգացումը՝ Հին Ռուսիայի պետականության, հասարակական և իրավական համակարգերի ձևավորման պահից, մինչև ժամանակակից Ռուսաստանի պետական կարգի և իրավական համակարգի ներկայիս վիճակը:

Այս դասընթացի ուսումնասիրությունը ուսանողներին հազեցնում է պատմական փորձի իմացությամբ, մշակում է պատմաիրավան մոտեցումները տարբեր խնդրահարույց երևույթների նկատմամբ, նպաստում է ռուսական պետության էության և զարգացման հիմնական միտումների բացահայտմանը, օգնում է խորը ներթափանցել Ռուսաստանի իավական համակարգի առանձնահատկությունների մեջ՝ դիտարկելով իրավունքի ճյուղերը, ինստիտուտները, սկզբունքները և նորմերը դրանց պատմական զարգացման համատեքստում:

Միևնույն ժամանակ, «Ռուսաստանի Պետության և իրավունքի պատմությունը» հիմք է ստեղծում այնպիսի իրավունքի ճյուղերի հետագա ուսումնասիրության համար, ինչպիսիք են «սահմանադրական իրավունքը», «քաղաքացիական իրավունքը», «քրեական իրավունքը» և այլն՝ դիտարկելով այս ճյուղերի և ինստիտուտների պատմական զարգացումը և դրանով իսկ մոտեցնելով ուսանողներին իրավունքի ճյուղերի և, ընդհանուր առմամբ, համակարգի ներկա վիճակի բնութագրին:

Դասընթացի կապն ուսումնական պլանի այլ առարկաների հետ: «Ռուսաստանի պետության և իրավունքի պատմություն» դասընթացը տրամաբանորեն փոխկապված է «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն», «Հայաստանի պետության և իրավունքի պատմություն», «Իրավական ուսմունքների պատմություն» և այլ պատմաիրավական ուսումնական դասընթացների հետ, ինչպես նաև «Պետության և իրավունքի տեսություն» դասընթացի հետ:

2. Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դասընթացի նպատակն է հանդիսանում Ռուսաստանի պետության և իրավական համակարգի ինչպես նախորդ դարերի, այդպես էլ ժամանակակից բազմազան խնդիրների և զարգացումների ինքնուրույն վերլուծության և գնահատման հմտությունների ձեռքբերումը՝ Ռուսաստանի պետաիրավական երևույթների պատմական զարգացման վերաբերյալ ձեռք բերված գիտելիքների միջոցով:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

- Ռուսաստանի պետության և իրավունքի ձևավորման և զարգացման հիմնական փուլերի ուսումնասիրություն.
- Ռուսաստանի պետական և հասարակական կարգի կազմակերպման առանձնահատկությունների դիտարկումը տարբեր պատմական ժամանակաշրջաններում.
- ռուսական իրավունքի հիմնական իրավական հուշարձանների և աղբյուրների հետազոտում.
- իրավական համակարգի, իրավունքի ճյուղերի և ինստիտուտների, օրենսդրական համակարգի ուսումնասիրությունը պատմական տարբեր փուլերում.
- պատմական և իրավական երևույթների վերլուծությունը, որը կօգնի ուսանողին կողմնորոշվել ժամանակակից Ռուսաստանի իրավական խնդիրների լուծման հարցում.
- ընդհանուր պատմաիրավան մտածելակերպի մշակում

3. Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտն է հանդիսանում Ռուսաստանի պետության և իրավունքի առաջացման և զարգացման ընդհանուր օրինաչափությունների և հիմնական միտումների բացահայտումը:

Դասընթացի առարկան է հանդիսանում ռուսական իրականության կոնկրետ երևույթների և գործընթացների, ռուսական պետության և իրավունքի տիպերի և ձևերի առաջացումը, զարգացումը և փոփոխումը, ինչպես նաև պետական և իրավական ինստիտուտների, իրավունքի պատմական հուշարձանների առանձնահատկությունների հետազոտումը ժամանակագրական հերթականությամբ:

4. Դասընթացի մուտքային պահանջները

«Ռուսաստանի պետության և իրավունքի պատմություն» առարկան ուսումնասիրելուց առաջ ցանկալի է ունենալ ընդհանուր պատկերացումներ համաշխարհային պատմության հիմնական փուլերի և հիմնական իրավական կատեգորիաների վերաբերյալ

5. Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գիտելիքները՝

- **Գիտելիք և իմացություն .**

1. Ռուսաստանի պետության և իրավունքի ձևավորման և զարգացման առանձնահատկությունների մասին հիմնարար գիտելիք.
2. Ռուսաստանի պետաիրավական ինստիտուտների և հասարակական կարգի ձևավորման վրա ազդող հիմնական գործոնների իմացություն.
3. Ռուսաստանի իրավական համակարգի, այդ թվում իրավունքի հուշարձանների, իրավունքի ճյուղերի և ինստիտուտների պատմական զարգացման միտումների վերաբերյալ հիմնարար գիտելիք.

Հմտությունները՝

- **Գիտելիքի և իմացության կիրառում.**

1. Կարող է արագ կողմնորոշվել իրավական համակարգի արդի խնդիրները լուծելիս, և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը՝ այդ թվում կիրառելով իրավական համակարգի պատմական զարգացման հիմնական ուղղությունների իմացությունը.
2. Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ պարզաբանել ռուսական իրավունքի նորմերը և պայմանագրերը:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- **Ընդհանրական իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը).**

1. Կարող է կիրառել մասնագիտական գիտելիքները և դրսևորել վերլուծական հմտությունները Ռուսաստանի պետաիրավական երևույթների առավել հաճախ հանդիպող խնդիրները բացահայտելու, գնահատելու և դրանց լուծումների ուղիները առաջարկելու համար.

- **Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ներառյալ սովերելու կարողությունները).**

1. Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո բարեխղճորեն կիրառել պատմաիրավական դասընթացի շրջանակներում ձեռք բերված բոլոր վերլուծական հմտությունները իր հետագա մասնագիտական գործունեության մեջ.

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2. Ունակ է՝ պարբերաբար ուսումնասիրել ռուսական օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, և անհրաժեշտության դեպքում այն օգտագործել արտասահմանյան աշխատանքային այցերի ընթացքում՝ Ռուսաստանի բազմամշակութային աշխատանքային միջավայրում ինտեգրվելու համար

6. Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասընթացի շրջանակներում կիրառվում են ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաների տարրեր (brainstorm, բանավեճ, դիսկուսիաներ, և այլ): Դասընթացի ուսումնական ծրագիրը ներառում է դասախոսություններ, սեմինարներ, ինչպես նաև ուսանողների ինքնուրույն աշխատանք:

Դասընթացի հիմնական տեսական նյութը մատուցվում է *դասախոսությունների* ընթացքում: Դասախոսության ժամանակ ուսանողներին տրամադրվում են նաև օժանդակող (աշխատանքային) նյութեր: Սեմինարական պարապունքներին և միջանկյալ/վերջնական ատեստավորմանը պատշաճ պատրաստվելու համար ուսանողներին արաջարկվում է դասախոսությունների ընթացքում կատարել նշումներ, գրի առնել դասախոսի կողմից ներկայացվող ձևակերպումների և գահափարների էությունը և հակիրճ բովանդակությունը, ըստ հնարավորության արձանագրել առաջ քաշված խնդրահարույց հարցերի հնարավոր լուծումները:

Սեմինարական (գործնական) պարապունքների ընթացքում կատարվում է դասախոսության ժամանակ մատուցված նյութերի մշակումը, ավելի խորը և մանրամասն ուսումնասիրությունը: Սեմինարների ընթացքում դասախոսը վերահսկում է ուսանողների կողմից ուսումնական նյութի ընկալման և յուրացման աստիճանը և որակը: Դասախոսի առաջարկությամբ ուսանողները լուծում են որոշակի առաջադրանքներ և խնդիրներ, որոնք իրենց մեջ բովանդակում են ընթացիկ և նախորդ թեմաները: Նման առաջադրանքները զարգացնում են ուսանողի՝ նյութը վերլուծելու հմտությունը, ամրապնդում են թեմաների հետևողական ուսումնասիրության և արագ յուրացման կարողությունները:

Ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողը դասախոսի ուղղորդմամբ կատարում է դասընթացի նյութերի լրացուցիչ ուսումնասիրություն ըստ ուսումնական թեմատիկ ծրագրի՝ օգտվելով սույն ծրագրի ուսումնամեթոդական նյութերի ցանկում թվարկված բազային, հիմնական և լրացուցիչ աղբյուրներից: Ինքնուրույն աշխատանքի շրջանակներում ուսանողն առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնի ստացված գիտելիքների ամրապնդմանն ու համակարգմանը:

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Միջանկյալ ատեստավորումը /մոդուլը անցկացվում է գրավոր, ողջ մոդուլի նյութերի ընդհանրացման և վերստուգման նպատակով, ուսանողներին տրամադրվում է մոդուլի թեմաների հարցաշար:

Վերջնական ատեստավորմանը/քննությանը լիարժեք պատրաստվելու համար ուսանողներին տրամադրվում է քննական հարցաշար, որի պահանջների համաձայն քննությանը նախապատրաստվելիս ուսանողը պետք է կրկնի դասընթացում ընդգրկված բոլոր նյութերը:

7. Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբովանդակում»՝ 4 ակադեմիական կրեդիտ և 144 ակադեմիական ժամ աշխատատարությամբ, որից 8 ակադեմիական ժամ նախատեսվում է դասախոսությունների և 12 ակադեմիական ժամ գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1 ուսումնական տարվա 2 կիսամյակում

8. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	Ամբողջը, ակ. ժամ.	Բաշխում ըստ կիսամյակների							
		1	2	3	4	5	6	7	8
		Կի. ա.	Կի. ա.	Կի. ա.	կիս. կիս.	Կիս. Կիս.	Կի. ա.	Կի. ա.	Կի. ա.
1	2	3	4	5	6	7	8	9	10
1. Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը			144						
1.1. Լսարանային պարապմունքներ:			20						
1.1.1. Դասախոսություններ			8						
1.1.2. Սեմինարներ			12						
1.2. Ինքնուրույն աշխատանք			120						
1.3. Հսկ. ժամեր			4						
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգաթղթ)									

9. Կշիռների բաշխումը ըստ մոդուլների և ստուգման ձևերի

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ստուգման ձևերը	Ընթացիկ ստուգումների ձևերի կշիռները ընթացիկ ստուգումների ամփոփչ գնահատականներում			Միջանկյալ ստուգումների ձևերի կշիռները միջանկյալ ստուգումների գնահատականներում			Միջանկյալ ստուգումների վերջնական գնահատականների կշիռները միջանկյալ ստուգումների ամփոփչ գնահատականներում	Միջանկյալ ստուգումների ամփոփչ գնահատականի և վերջնական ստուգման գնահատականի կշիռները վերջնական ստուգման ամփոփչ գնահատականում
	M1	M2		M1	M2			
Ուսումնական աշխատանքի/ստուգման տեսակը								
Ստուգողական աշխատանք				0,6				
Բանավոր ստուգում	1							
Միջանկյալ ստուգումների վերջնական գնահատականներում ընթացիկ ստուգումների ամփոփչ գնահատականների կշիռները				0,4				
Միջանկյալ ստուգումների ամփոփչ գնահատականում 1-ին միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը								
Միջանկյալ ստուգումների ամփոփչ գնահատականում 2-րդ միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը								
Միջանկյալ ստուգումների ամփոփչ գնահատականում 3-րդ միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը								
Վերջնական ստուգման ամփոփչ գնահատականում միջանկյալ								0,4

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

քննությունների արդյունքային գնահատականի կշիռը.								
Քննություն/ստուգարք (Վերջնական ստուգման գնահատական)								0,6
	Σ=1	Σ=1	Σ=1	Σ=1	Σ=1	Σ=1	Σ=1	Σ=1

10. Առարկայի բովանդակությունը

10.1 Թեմատիկ պլան (Առարկայի ծավալի բաշխումը ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների)

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը (ակ. ժամեր)	Լեկցիաներ (ակ. ժամեր)	Պրակտիկ պարապմունքներ (ակ. ժամեր)	Ինքնուրույն աշխատանք
1	2	3	4	5
Թեմա 1. Հին ռուսական պետությունն ու իրավունքը (Կիևյան Ռուսիա) 1X-X11 դարերում	18	1	2	15
Թեմա 2. Ռուսիայի պետությունն ու իրավունքը մասնատման ժամանակաշրջանում (X11 - XIV դարեր)	17	1	1	15
Թեմա 3. Ռուսիայի պետությունն ու իրավունքը կենտրոնացված Մոսկովյան պետության և դասային-ներկայացուցչական միապետության ժամանակաշրջաններում:	18	1	2	15
Թեմա 4. Ռուսաստանի պետությունն ու իրավունքը բացարձակ միապետության ձևավորման և զարգացման ժամանակաշրջանում (XVII- XVIII դդ.)	18	1	2	15
Թեմա 5. Ռուսաստանի պետությունն ու իրավունքը բուրժուադեմոկրատական	17	1	1	15

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

բարեփոխումների ժամանակաշրջանում (XIX-րդ դարի երկրորդ կես, XX դարի առաջին տասնամյակ)				
Թեմա 6. Ռուսաստանի պետությունը և իրավունքը հեղափոխությունների և խորհրդային իշխանության ձևավորման ժամանակաշրջանում (XX դ. առաջին քարրորդ)	17	1	1	15
Թեմա 7. 1 Խորհրդային պետությունն ու իրավունքը «ՆԵՊ-ի» օրոք և 30-ականների ժամանակաշրջանում: Թեմա 7. 2 Խորհրդային պետությունն ու իրավունքը 50-70 -ականների շրջանում: «Լճացում»:	18	1	2	15
Թեմա 8. Ռուսաստանի պետությունը և իրավունքը «Վերակառուցման» և ԽՍՀՄ փլուզման ժամանակաշրջանում (1980-1991)	17	1	1	15
Ընդամենը	140	8	12	120

Մոդուլ 1

10.2 Առարկայի բաժինների և թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Հին ռուսական պետությունն ու իրավունքը (Կիևյան Ռուսիա) 1X- X11 դարերում:

Կիևյան Ռուսիայի առաջացման հիմնական տեսությունները: Վարյագների դերը Ռուսիայում: Առաջին ժամանակագրական հիշատակումը Ռուսիայի մասին: 882 թվականի Նովգորոդյան և Կիևյան հողերի միավորումը միասնական Հին Ռուսական պետության ներքո: Կիևյան Ռուսիայի պետական կարգը: Իշխանության կենտրոնական

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

մարմինները: Մեծ Իշխանի կարգավիճակը: Մեծ Իշխանին կից Խորհուրդի լիազորությունները: Ֆեոդալական համագումարները: Տեղական կառավարման համակարգը: Կիևյան Ռուսիայի հասարակական կարգի առանձնահատկությունները: Հասարակության վերնախավի իրավական կարգավիճակը: Քաղաքային բնակչությունը: Գյուղական բնակչության դասը: Սմերդների, իզգոյների և զակուպների իրավական կարգավիճակը: Ստրուկներ և ճորտեր:

Հին Ռուսիայի իրավունքի աղբյուրները: Ռուսիայի և Բյուզանդիայի նորմատիվ պայմանագրերը: Սովորույթային իրավունքի դերը: Վլադիմիր Սվետոսլավի և Յարոսլավ Վլադիմիրովիչի եկեղեցական կանոնադրությունները (X-XI դդ.): Բյուզանդական իրավունքի ռեցեպցիան: «Ռուսկայա Պրավդան» որպես Հին Ռուսիայի առաջին օրենքների ժողովածու: «Ռուսկայա Պրավդայի» երեք հրատարակությունները՝ Կրատկայա, Պրոստրաննայա և Սոկրաշյոննայա (կրճատված): «Ռուսկայա Պրավդայի» կառուցվածքը և առանձնահատկությունները: «Ռուսկայա Պրավդայի» քաղաքացիական իրավունքը: Ընտանեկան և ժառանգական իրավունքը: Հանցագործությունների և պատիժների համակարգը ըստ «Ռուսկայա Պրավդայի»: Դատը և դատավարությունը ըստ «Ռուսկայա Պրավդայի»:

ա) Բազային գրականություն:

1. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024
2. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
3. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012

բ) Հիմնական գրականություն

1. История государства и права России : учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, 2024.
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016
3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
4. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015
5. Отечественное законодательство IX-XIX века. Пособие для семинаров /Под ред. О.И. Чистякова. М., 2000.
6. Практикум по дисциплине «История государства и права России» (часть I) / авт.-сост. канд. ист. наук О. А. Голикова. Новокузнецк:ФКОУ ВПО Кузбасский институт ФСИН России, 2015.

գ) Լրացուցիչ գրականություն

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1. История отечественного государства и права : учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.
2. Вишневский А.А. Киевская Русь: введение христианства и проблема рецепции византийского церковного права // Государство и право. 1992. № 4.
3. Карамзин Н.М. История государства Российского: В 4 т. М., 1988.
4. Вернадский Г.В. Киевская Русь. М., 1996.

դ) Էլեկտրոնային ռեսուրս

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. <https://www.biblio-online.ru/bcode/433195>

Թեմա 2. Ռուսիայի պետությունն ու իրավունքը մասնատման ժամանակաշրջանում (XII - XIV դարեր)

Կիևյան Ռուսիայի կազմալուծումը. հիմնական գործոնները և պատճառները: Ավատատիրական պետությունների կոնգլոմերատ. Ռոստով-Սուզդալյան, Սմոլենսկի, Ռյազանսկի, Մուրոմսկի, Գալիցկո-Վոլինսկի, Նովգորոդյան հողեր և այլն:

Վլադիմիր-Սուզդալյան հողի սոցիալ-քաղաքական զարգացման առանձնահատկությունները: Գալիցկո-Վոլինսկու հողի սոցիալ-քաղաքական զարգացման առանձնահատկությունները: Նովգորոդյան և Պսկովյան պետությունների պետական և հասարակական կարգի առանձնահատկությունները: «Պարոն Մեծ Նովգորոդի» կարգավիճակը: Նովգորոդի և Պսկովի պետական իշխանության և կառավարման մարմինները: Վեչեյի ժողովը որպես ներկայացուցչական և օրենսդիր մարմին: Պոսադնիկի՝ գերագույն պաշտանական անձի լիազորությունները: Հազարապետի և արքեպիսկոպոսի իրավասությունները: Իշխանի կարգավիճակը և գործառույթները:

Ռուսական իրավունքի աղբյուրները մասնատման ժամանակահատվածում: Նովգորոդի դատական գիրը (XV դ.)՝ ընդհանուր բնութագիր: Պսկովյան դատական գիրը (XV դ.)՝ կառուցվածքը և խմբագրությունները: Քրեական իրավունքը Պսկովի դատական գրի համաձայն: Քաղաքացիական իրավունքը Պսկովի դատական գրի համաձայն: Ամուսնարնտանեկան իրավունքը: Դատական համակարգը և դատավարությունը Պսկովի դատական գրի համաձայն:

ա) Բազային գրականություն:

1. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
3. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012

բ) Հիմնական գրականություն

1. История государства и права России: учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, 2024.
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016
3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
4. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015
5. Отечественное законодательство IX-XIX века. Пособие для семинаров /Под ред. О.И. Чистякова. М., 2000.
6. Юшков С.В. История государства и права России (IX-XIX вв.). Ростов н/Д, 2003.
7. Практикум по дисциплине «История государства и права России» (часть I) / авт.-сост. канд. ист. наук О. А. Голикова. Новокузнецк:ФКОУ ВПО Кузбасский институт ФСИН России, 2015.

գ) Լրացուցիչ գրականություն

1. История отечественного государства и права : учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.
2. Алексеев Ю.Г. Псковская судная грамота и её время. Л., 1980.
3. Карамзин Н.М. История государства Российского: В 4 т. М., 1988.

դ) Էլեկտրոնային

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. <https://www.biblio-online.ru/bcode/433195>

Թեմա 3. Ռուսիայի պետությունն ու իրավունքը կենտրոնացված Մոսկովյան պետության և դասային-ներկայացուցչական միապետության ժամանակաշրջաններում:

Մոսկովյան պետություն: Մոսկովյան իշխանությունը որպես ապագա միասնական պետության կենտրոն: Մոսկովյան կենտրոնացված պետության պետական

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

և հասարակական կարգի առանձնահատկությունները: Պետության գլուխը. Մեծ իշխանի կարգավիճակի հիմնական փոփոխությունները: Բոյարական Դուման որպես կառավարման կենտրոնական մարմին: Դումայի կազմը և իրավասությունը: «Պրիկազները» /գերատեսչությունները/ որպես կենտրոնական ճուղային մարմինների համակարգ: Մեծ պալատի պրիկազ, Մեծ Գանձարանի պրիկազ, Դեսպանական պրիկազ, Պաշտոնների նշանակման պրիկազ, Հետախուզական պրիկազ, Յամսկոյ պրիկազ և այլն: Մոսկովյան պետության տեղական կառավարումը: Մոսկովյան պետության իրավունքի աղբյուրները: 1497-ի Դատական օրենսգիրք. ընդհանուր նկարագրություն:

Դասային-ներկայացուցչական միապետություն: Միապետի կարգավիճակը: Ինքնակալ կառավարման ձևի հաստատումը: Իվան Ահեդի պետական բարեփոխումները: Բոյարական Դումայի հզորության նվազեցումը: «Օպրիչնինայի» շրջանը: Իշխանական և բոյարական հայրենակալվածքների բռնագրավումը: Նոր ազնվականության դերի ուժեղացումը: Ջեմսկու Ժողովը որպես գերագույն ներկայացուցչական մարմին: Ջեմսկու Ժողովի կառուցվածքը, կազմը և իրավասությունը: Պրիկազների (գերատեսչությունների) զարգացումը՝ հատուկ տարածքային պրիկազներ:

Հասարակական կարգ: Ավատատիրախիան վերնախավի հիմնական խմբերը և դրանց առճակատումը: Քաղաքային բնակչություն կարգավիճակը: Գյուղացիների կարգավիճակը: Ճորտատիրական իրավունքի ներդրումը՝ հիմնական փուլերը և առանձնահատկությունները:

1649 թվ. «Սոբորնոյե Ուլոժենիյե» որպես ժամանակաշրջանի իրավունքի հիմնական աղբյուր՝ ստեղծման պատմությունը և աղբյուրները: «Սոբորնոյե Ուլոժենիյայի» կառուցվածքը: Հանցագործությունների և պատիժների համակարգը «Սոբորնոյե Ուլոժենիյայի» համաձայն: Դատը և դատավարությունը «Սոբորնոյե Ուլոժենիյայի» համաձայն: Քաղաքացիական իրավունքը «Սոբորնոյե Ուլոժենիյայի» համաձայն:

ա) Բազային գրականություն:

1. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024
2. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
3. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012

բ) Հիմնական գրականություն

1. История государства и права России : учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, 2024.
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
4. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015
5. Отечественное законодательство IX-XIX века. Пособие для семинаров /Под ред. О.И. Чистякова. М., 2000.
6. Юшков С.В. История государства и права России (IX-XIX вв.). Ростов н/Д, 2003.
7. Практикум по дисциплине «История государства и права России» (часть I) / авт.-сост. канд. ист. наук О. А. Голикова. Новокузнецк:ФКОУ ВПО Кузбасский институт ФСИН России, 2015.

գ) Լրացուցիչ գրականություն

1. История отечественного государства и права : учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.
2. Карамзин Н.М. История государства Российского: В 4 т. М., 1988.
3. Законодательство периода образования и укрепления Русского централизованного государства - М., 1985.

դ) Էլեկտրոնային ռեսուրս

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. <https://www.biblio-online.ru/bcode/433195>
2. Информационно-правовой портал законодательства РФ <https://garant.ru>

Թեմա 4. Ռուսաստանի պետությունն ու իրավունքը բացարձակ միապետության ձևավորման և զարգացման ժամանակաշրջանում (XVII- XVIII դդ.)

Պետրող Առաջինի պետաիրավական և հասարակական կարգի բարեփոխումների հիմնական ուղղությունները և ընդհանուր բնութագիրը:

Կառավարական Սենատը որպես գերագույն և վերգերատեսչական մարմին: Սենատի ստեղծման պատմությունը և կազմը: Սենատին կից Գեներալ-դատախազի և Օբեր-դատախազի պաշտոնները: Պրիկազների համակարգի լուծարումը և Կոլեգիաների համակարգի ստեղծումը: Արտաքին գործերի կոլեգիա, Առևտրական կոլեգիա, Մանուֆակտուր-կոլեգիա (արդյունաբերական), Ռազմական և Ծովակալության կոլեգիա, Արդարադատական կոլեգիա, Վերստուգիչ կոլեգիա և այլ: Կոլեգիաների ղեկավար կազմը, գործունեության կարգը և լիազորությունները: Ֆիսկալիտետի և դատախազության հիմնադրումը: Ռազմական բարեփոխումները:

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հասարակական կարգը բացարձակ միապետության ժամանակ: Ազնվականության իրավական կարգավիճակը և 1714 թ. Միաժառանգության մասին հրամանագիրը: 1722 թ. «Աստիճանների ցուցակը» և նրա հեղափոխական նշանակությունը պետական ծառայության ոլորտում: Նոր պաշտոնների և աստիճանների համակարգը:

Քաղաքային բնակչությունը՝ ազնվականներ, կանոնավոր քաղաքացիներ և «սև մարդիկ»: Կանոնավոր քաղաքացիների բաժանումը երկու գիլդիայի:

Գյուղացիների կարգավիճակը՝ կալվածատիրական գյուղացիներ, պետական գյուղացիներ, «տնտեսական» գյուղացիներ:

Իրավունքի հիմնական աղբյուրները բացարձակ միապետության ժամանակ: Քաղաքացիական իրավունքի առանձնահատկությունները բացարձակ միապետության ժամանակ, նոր ինստիտուտների ստեղծումը: Ամուսնաընտանեկան իրավունքի նորամուծությունները: Քրեական իրավունքը Պետրոս Առաջինի օրոք՝ 1716 թ. «Զինվորական օրենքներ»: Նոր հանցագործությունների և պատիժների համակարգը:

ա) Բազային գրականություն:

1. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024
2. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
3. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012

բ) Հիմնական գրականություն

1. История государства и права России: учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, **2024**.
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016
3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
4. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015
5. Отечественное законодательство IX-XIX века. Пособие для семинаров /Под ред. О.И. Чистякова. М., 2000.
6. Вернадский Г.В. Очерк истории права русского государства. XVIII-XIX вв. (период империи). М., 1998.
7. Юшков С.В. История государства и права России (IX-XIX вв.). Ростов н/Д, 2003.
8. Практикум по дисциплине «История государства и права России» (часть I) / авт.-сост. канд. ист. наук О. А. Голикова. Новокузнецк:ФКОУ ВПО Кузбасский институт ФСИН России, 2015.

գ) Լրացուցիչ գրականություն

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1. История отечественного государства и права: учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.
2. Бушуев, С.В. История государства Российского. Книга 2. XVII-XVIII вв.: Историко-библиографические очерки. Новосибир.: Сиб. хронограф, 2012.
3. Анисимов Е.В. Государственные преобразования и самодержавие Петра Великого. СПб., 1997.
4. Карамзин Н.М. История государства Российского: В 4 т. М., 1988.

դ) Էլեկտրոնային ռեսուրս

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. <https://www.biblio-online.ru/bcode/433195>
2. Информационно-правовой портал законодательства РФ <https://garant.ru>

Թեմա 5. Ռուսաստանի պետությունն ու իրավունքը բուրժուադեմոկրատական բարեփոխումների ժամանակաշրջանում (XIX-րդ դարի երկրորդ կես, XX դարի առաջին տասնամյակ)

19-րդ դարի ռուսական օրենսդրության կողմնակիցը: Միխայիլ Սպերանսկու հիկանական դերը և ծավալած աշխատանքները: «Ռուսական կայսրության գործող օրենքների ժողովածուի» ստեղծումը: «Ռուսական կայսրության օրենքների ամբողջական ժամանակագրական ժողովածուն»: «Քրեական և ուղղիչ պատիժների մասին» օրենսգիրքը:

Ալեքսանդր 2-ի մեծ պետաիրավական բարեփոխումների բնութագիրը: Ճորտատիրական իրավունքի վերացումը (1861թ.) (Գյուղացիական բարեփոխումը): Ազատագրված գյուղացիների իրավական կարգավիճակը. Դատական բարեփոխումները: Համաշխարհային դատարանների ստեղծումը: Երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրումը: Ջեմսկու և քաղաքային բարեփոխումների իրականացումը: Ինքնակառավարման ընտրովի մարմինների հիմնադրումը: Փաստաբանության և նոտարիատի ինստիտուտի ներդրումը: Բարեփոխումները կրթության ոլորտում: Ռազմական բարեփոխումներ:

1906 թվականի Ագրարային (Ստոլիպինի) բարեփոխումը: Պետական կարգի բարեփոխումը և Սահմանադրական միապետության անցնելու միտումները: 1905 թվականի հոկտեմբերի 17-ի «Հասարակական կարգի բարելավման մասին» մանիֆեստը. իրավական բնութագիրը և քաղաքական նշանակությունը: 1906 թ. ապրիլի «Հիմնական պետական օրենքները» որպես Ռուսաստանի առաջին փաստացի սահմանադրություն՝ ընդհանուր բնութագիր: Ռուսաստանի կայսրի կարգավիճակը 1906 թ. «Հիմնական օրենքների համաձայն»: Ռուսաստանի Պետական Դումայի և Պետական Խորհրդի իրավական կարգավիճակը:

ա) Բազային գրականություն:

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024
2. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
3. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012

բ) Հիմնական գրականություն

1. История государства и права России : учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, 2024.
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016
3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
